

03.10.2003թ.

ժ. 11.⁰⁰**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Հ. Պետրոսյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան (*Խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*Խորհրդի քարտուղար*)
Հրավիրված էին՝ Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ*), Ա. Անանյան (*Արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ*), Լ. Պետրոսյան (*Կապիտալ շինարարության վիճակագրության բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում՝ յոթ հարց.

1. Վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը հաստատելու մասին

/Չեկուցող՝ Գ. Գյուրջյան/

2. «Պետական վիճակագրական դիտարկման փաստաթղթերի (պետական վիճակագրական հաշվետվություն և պետական վիճակագրական ամփոփ հաշվետվություն) դիմային էջերի նմուշային տարբերակներին հավանություն տալու մասին.

/Չեկուցող՝ Գ. Գյուրջյան/

3. «Տարեկան հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական, տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ վիճմախարարի 29.11.1999թ. «պետական վիճակագրական հաշվետվություններ և դրանց լրացման մեթոդական ցուցումներ հաստատելու մասին» թիվ 235 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին.

/Չեկուցող՝ Ա. Անանյան/

4. «Տեղեկություններ հիմնական միջոցների, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների առկայության և շարժի մասին» Ձև թիվ 11-ՀՄ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ վիճմախարարի 20.03.2000թ. թիվ 26 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին.

/Չեկուցող՝ Ա. Անանյան/

5. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 09.08.2002թ. «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների իրականացման մասին» Ձև թիվ 2-կշ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 132-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

/Չեկուցող՝ Լ. Պետրոսյան/

6. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 10.09.2002թ. «Արդյունաբերական կազմակերպության տնտեսական գործունեությունը համալիր բնութագրող հիմնական ցուցանիշների ամփոփ աղյուսակ» Ձև թիվ 22 պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 200-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին.

/Չեկուցող՝ Ա. Անանյան/

7. Այլ հարցեր

7.1 Հաղորդում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ ՀՀ Կառավարություն ներկայացվելիք առաջարկությունների մասին.

/Չեկուցող՝ Ս. Մնացականյան/

Նախագահի կողմից ներկայացվեց Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որի քննարկման ժամանակ Գ. Անանյանի կողմից առաջարկվեց նախագծից հանել թիվ 4 հարցը հաշվետվության ձևի լրամշակման և խմբագրման անհրաժեշտությամբ պայմանավորված: Խորհրդի նիստի նախագիծը հաստատվեց վեց հարցով:

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. Վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը հաստատելու մասին
/Զեկուցող՝ Գ. Գյուրջյան/

Նշվեց, որ տեղեկությունների ներկայացման նոր կարգի հաստատման և կիրառության մեջ դնելու անհրաժեշտությունը պայմանավորված է նախկին Կարգի ընդունմանը հաջորդած ժամանակաշրջանում օրենսդրական դաշտում տեղի ունեցած փոփոխություններով, ինչպես նաև կիրառական հարթության մեջ առաջ եկած նոր հարաբերությունների կարգավորման բարդություններով, որը դուրս է մնացել նախկին կարգի գործունեության ոլորտից: Կարգի նոր նախագծի մշակումը պայմանավորված է նաև նախատեսվող փոփոխությունների և լրացումների ծավալի մեծությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը»՝ համաձայն հավելված 1-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 23 հուլիսի 2001 թվականի «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 56 որոշումը:

/Նորմատիվ/

/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «Պետական վիճակագրական դիտարկման փաստաթղթերի (պետական վիճակագրական հաշվետվություն և պետական վիճակագրական ամփոփ հաշվետվություն) դիմային էջերի նմուշային տարբերակներին հավանություն տալու մասին.

/Զեկուցող՝ Գ. Գյուրջյան/

Նշվեց, որ, սույն արձանագրային որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է պետական վիճակագրական դիտարկման փաստաթղթերի (պետական վիճակագրական հաշվետվություն և պետական վիճակագրական ամփոփ հաշվետվություն) դիմային էջերի միասնականացման և միօրինականացման նկատառումներով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հավանություն տալ «Պետական վիճակագրական դիտարկման փաստաթղթերի (պետական վիճակագրական հաշվետվություն և պետական վիճակագրական ամփոփ հաշվետվություն) դիմային էջերի նմուշային տարբերակներին՝ համաձայն հավելված 1-ի:

/Արձանագրային/

/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. «Տարեկան հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական, տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ վիճնախարարի 29.11.1999թ. «պետական վիճակագրական հաշվետվություններ և դրանց լրացման մեթոդական ցուցումներ հաստատելու մասին» թիվ 235 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին.

/Զեկուցող՝ Ա. Անանյան/

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական), «Հաշվետվություն արդյունաբերական կազմակերպության արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևերը և լրացման մեթոդական ցուցումները՝ համաձայն հավելված 1-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարի 1999 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 235 հրամանը:

/Նորմատիվ/

/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 09.08.2002թ. «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների իրականացման մասին» Ձև թիվ 2-կշ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 132-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

/Չեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Նշվեց, որ հաշվի առնելով հաշվապահական հաշվեկշռի կազմման սկզբունքները և հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի դրույթները, ինչպես նաև ապահովելու համար հաշվետվության ձևերի երկայացման ժամկետների օպերատիվությունն ու տվյալների արժանահատությունը՝ հարկ է ներկայացման ժամկետը հաշվետու ժամանակաշրջանին հարջորդող տարվա մարտի 1-ից տեղափոխել ապրիլի 1-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների իրականացման մասին» Ձև թիվ 2-կշ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 132-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Հավելված 1-ի Պետական վիճակագրական հաշվետվության ձևի դիմային էջի Հաշվետվության ներկայացման ժամկետը մասում «մարտի 1-ը» բառերը փոխել «ապրիլի 1-ը» բառերով:

/Նորմատիվ/

/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 10.09.2002թ. «Արդյունաբերական կազմակերպության տնտեսական գործունեությունը համալիր բնութագրող հիմնական ցուցանիշների ամփոփ աղյուսակ» Ձև թիվ 22 պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 200-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին.

/Չեկուցող՝ Ա. Անանյան/

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10 «Արդյունաբերական կազմակերպության տնտեսական գործունեությունը համալիր բնութագրող հիմնական ցուցանիշների ամփոփ աղյուսակ» Ձև թիվ 22 պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 200-Ն որոշումը:

/Նորմատիվ/

/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

6. Այլ հարցեր

6.1 Հաղորդում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ ՀՀ Կառավարություն ներկայացվելիք առաջարկությունների մասին.

/Չեկուցող՝ Ս. Մնացականյան/

Նշվեց, որ սույն օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ ստորև ներկայացվելիք առաջարկությունների անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 26 դեկտեմբերի 2002թ. «ՀՀ կառավարության 2003 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 2141-Ն որոշմամբ հաստատված հավելվածի կետ 327-ում նշված միջոցառման իրականացման անհրաժեշտությամբ: Ըստ այդմ, մինչ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից առաջարկությունների ներկայացումը ՀՀ կառավարություն, հարկ է դրանք,

սահմանված կարգով, քննարկել և հավանության արժանացնել նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից: Ընդ որում, ՀՀ ԱՎԾ-ի կողմից առաջարկությունները նախատեսվում է ներկայացնել օրենքի նախագծի հետևյալ ձևաչափով.

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (7 մայիսի 2002 թվականի, ՀՕ-337) 32-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «19¹» կետով.
«19¹) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով վարում է տեղեկատվական ներքին ռեզիստրներ»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 45¹ հոդվածով.
«Հոդված 45¹. Համայնքի ղեկավարի գործունեությունը տեղեկատվական ներքին ռեզիստրների վարման բնագավառում

Տեղեկատվական ներքին ռեզիստրների վարման բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է պետության կողմից պատվիրակված հետևյալ լիազորությունները.

1) կազմակերպում է համայնքի գործունեության համար անհրաժեշտ հաշվառումներ, հաշվեգրումներ.

2) վարում է համայնքի անձնագիրը, ինչը ներառում է բնակչության թվաքանակի, սեռատարիքային և սոցիալական կազմի, համայնքում տեղաբաշխված մշակութային, կրթական և մարզական համալիրների (կառույցների), առողջապահության, բնակարանային կոմունալ տնտեսության, արտադրական ենթակառուցվածքների, համայնքի բյուջեի և այլ անհրաժեշտ տեղեկությունների վերաբերյալ մշտապես կուտակվող և պահպանվող ցուցանիշների համակարգը:

Համայնքի անձնագրի ձևը և լրացման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

3) օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում է վիճակագրական տվյալների (տեղեկությունների) հավաքագրման, ամփոփման և ներկայացման աշխատանքները.

4) կազմակերպում է համայնքի գործունեության և ղեկավարման համար անհրաժեշտ այլ տեղեկատվական գործառնությունների իրականացումը:»:

Հոդված 3. Օրենքի 84-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 12-րդ կետով.

«12. Սույն օրենքի 45¹ հոդվածի առաջին մասի երկրորդ կետում նշված՝ համայնքների անձնագրերը վարվում են 2004 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակաշրջանի համար»:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հավանություն տալ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ ՀՀ Կառավարություն ներկայացվելիք առաջարկությունների մասին հաղորդմանը:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան